

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր
Ուսումնականության մասին

ք. Երևան

_____._____._____ թ.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ, Համալսարան կամ ՀԱԱՀ), ի դեմս ռեկտոր Վարդան Ուռուտյանի, որը գործում է համաձայն Հիմնադրամի կանոնադրության՝ մի կողմից և _____ ֆակուլտետի _____ մասնագիտության _____ կուրսի ուսանող _____ (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. Պայմանագրի իրավական հիմքերն են ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ Կառավարության և, Կրթության ոլորտում պետական լիազոր մարմնի՝ կրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերը, Հիմնադրամի կանոնադրությունը, Համալսարանի ներքին կարգապահական կանոնները, Համալսարանի ներքին իրավական ակտերը և այլ իրավական ակտեր:

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

2. Պայմանագրի առարկան Ուսանողի՝ _____ ձևով, _____ կրթական ծրագրով
/առկա, հեռակա/ /բակալավրիատ, մագիստրատուրա/
ուսումնառություն իրականացնելու կարգն ու պայմաններն են:
3. Ուսանողի ուսումնառության ժամկետը _____ տարի _____ ամիս է:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ

4. Իր ինքնավարության շրջանակներում կազմակերպել ուսումնական գործընթացը՝ այդ թվում ուսանողների ատեստավորման ձևերը և կարգը, ըստ գործող ուսումնական պլանների և չափորոշիչների:
5. Օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով, այլ իրավական ակտերով սահմանված պարտականությունները չկատարելու կամ խախտելու, ինչպես նաև ակադեմիական անբավարար առաջադիմության դեպքում Ուսանողի նկատմամբ կիրառել կարգապահական պատասխանատվության միջոցներ, ընդհուպ Համալսարանից հեռացնել:
6. Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետում ուսման վարձը չվճարելու դեպքում Ուսանողին հեռացնել Համալսարանից:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է

7. Կազմակերպել ուսանողի ուսուցումը՝ սահմանված կարգով հաստատված ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի (մոդուլների) համաձայն:
8. Ստեղծել ուսումնական ծրագրով նախատեսված ուսումնական գործընթացն ապահովող հնարավոր բոլոր պայմանները:
9. Ուսանողներին ծանոթացնել Համալսարանի ներքին կարգապահական կանոններին և այլ ակտերին (այդ թվում էլեկտրոնային ազդարարման և ծանուցման միջոցներով):
10. Ուսումնառությունն ավարտելու և ամփոփիչ ատեստավորումը հաջողությամբ անցնելու դեպքում Ուսանողին շնորհել ավատական փաստաթուղթ՝ դիպլոմ:

ՈՍԱՆՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ

11. Մասնակցել ուսումնագիտական, հետազոտական աշխատանքներին, գիտաժողովներին և այլ միջոցառումների:
12. Սահմանված կարգով օգտվել Համալսարանի հանրակացարանից, հանգստյան տնից, գրադարանից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական և այլ ստորաբաժանումների ծառայություններից:
13. Սահմանված կարգով մասնակցել Համալսարանի կառավարման մարմինների աշխատանքներին:
14. Ծանոթանալ Համալսարանի կանոնադրությանը, ներքին կարգապահական կանոններին և այլ փաստաթղթերին:
15. Ուսման բարձր առաջադիմության և գիտահետազոտական աշխատանքներին մասնակցել համար սահմանված կարգով ստանալ ոչ նյութական և/կամ նյութական խրախուսանք:
16. Ուսանողն իրավունք ունի ստանալ ուսանողական նպաստի ձևով լրիվ կամ մասնակի փոխհատուցում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
17. Ուսանողներին պետական կրթաթոշակ է տրվում գերազանց և լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսևորելու համար: Պետական կրթաթոշակի տրման կարգը և չափը սահմանում է ՀՀ Կառավարությունը:

ՈՍԱՆՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է

18. Սահմանված կարգով և ժամկետում կատարել ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով (մոդուլներով) նախատեսված բոլոր առաջադրանքները, անցնել ատեստավորումներ, պարտադիր հաճախել դասերին: Շրջահայեցություն դրսևորել և հետամուտ լինել Հիմնադրամի իրավական ակտերին (Համալսարանի կանոնադրությանը, ներքին կարգապահական կանոններին և այլ փաստաթղթերին) ծանոթանալուն, հետևել Համալսարանի կողմից հրապարակվող ծանուցումներին, իրավական ակտերին, դրանց փոփոխություններին (այդ թվում՝ Հիմնադրամի պաշտոնական կայք-էջի միջոցով):

19. Սահմանված կարգով և ժամկետում վճարել ուսման վարձը:

20. **Պահպանել Համալսարանի կանոնադրությամբ սահմանված դրույթները և ներքին կարգապահական կանոնները:**

21. **Խստորեն հետևել ակադեմիական բարեկարգության սկզբունքներին և կանոններին, հարգալից վերաբերվել բոլոր անձանց:**

22. **Խնամքով վերաբերվել Հիմնադրամի, այլ ուսանողների, Հիմնադրամի աշխատողների և այլ անձանց գույքին:**

23. **Խնամքով վերաբերվել Հիմնադրամի, այլ ուսանողների, Հիմնադրամի աշխատողների և այլ անձանց գույքին:**

24. **Պահպանել Համալսարանի անդորրը, տարածքների մաքրությունը, չխել Համալսարանում և թույլ չտալ ուսումնական գործընթացի հետ անհամատեղելի այլ արարքներ:**

25. Հետևողական լինել և սահմանված ժամկետում և կարգով դիմել Համալսարանին՝ ուսման վարձի փոխհատուցմանը՝ որևէ հիմքով հավակնելու, ինչպես նաև ուսումնառության դադարեցումը ձեակերպելու դեպքերում: Սույն կետի պահանջները չկատարելու դեպքում Ուսանողն է կրում իր համար առաջացող բոլոր ռիսկերն ու բացասական հետևանքները:

ՈՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

26. Ուսանողն ընդունվում է _____ համակարգում:

վճարովի / անվճար

Վճարովի համակարգում սովորող Ուսանողի ուսման տարեկան վարձը Համալսարանի կողմից սահմանվում է _____ դրամ: Եթե Ուսանողը, ուսումնառության որևէ փուլում հավակնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի փոխհատուցման, ապա վերջինիս ձևակերպումը և հաշվարկները կատարվում են օրենսդրությամբ սահմանված կարգով:

27. Վճարովի համակարգում ընդունված կամ, ուսումնառության ընթացքում օրենսդրությամբ սահմանված հիմքերով վճարովի համակարգ տեղափոխված Ուսանողի համար, սահմանված ուսման վարձը հաստատուն է ուսանողի՝ տվյալ կրթական ծրագրով ուսումնառության ողջ ժամանակահատվածի համար՝ բացառությամբ ուսանողի նախաձեռնությամբ տեղափոխության (շարժունության), ինչպես նաև՝ ուսանողի մեղքով ուսումնառության դադարեցումը պատշաճ չձեակերպվելու դեպքերի: Համալսարանից հեռացված (ազատված), այնուհետև սահմանված կարգով ուսանողական իրավունքները վերականգնած ուսանողներն ուսման վարձը վճարում են նոր պայմանագրով սահմանված չափով: Համալսարանից հեռացված (ազատված) ուսանողի ուսանողական իրավունքները վերականգնվում են Ուսանողի՝ Համալսարանի հանդեպ ունեցած դրամական պարտավորությունների մարումից հետո:

28. Ուսանողն ուսման վարձը կարող է վճարել ըստ կիսամյակների կամ օրենսդրությամբ սահմանված այլ կարգով: Ուսման վարձն ըստ կիսամյակների վճարելու դեպքում. առկա ուսուցման ձևով Ուսանողները այն վճարում են մինչև սեպտեմբերի 15-ը, իսկ հեռակա ուսուցման ձևով Ուսանողները՝ ուսումնական պարապմունքների սկզբից առնվազն մեկ շաբաթ առաջ:

29. Ուսման վարձը վճարվում է անկանխիկ Համալսարանի հաշվարկային հաշվին: Ուսանողը պարտավոր է վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացնել համապատասխան դեկանատ:

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ

30. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է տվյալ կրթական ծրագրով նախատեսված ամբողջ ժամանակահատվածի համար:

31. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերի համաձայնությամբ, Կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՅԹՆԵՐ

32. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով ՀՀ օրենսդրության նյութական և դատավարարական նորմերի կիրառմամբ. ընդ որում, Կողմերը համաձայնում են, որ դատական կարգով վեճերի լուծումը ենթակա է Համալսարանի գտնվելու վայրի դատարանի քննությանը՝ անկախ Համալսարանի դատավարական կարգավիճակից:

33. Ուսանողի նախաձեռնությամբ կամ մեղքով Պայմանագիրը լուծվելու դեպքում տվյալ փուլի վճարված ուսման վճարը չի վերադարձվում:

34. Պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

35. Ուսանողը ծանոթացել է Համալսարանի կանոնադրությանը, ներքին կարգապահական կանոնակարգին, ուսումնական գործընթացն ապահովող իրավական ակտերին, որը հավաստում է Պայմանագիրը ստորագրելով:

36. Կողմերը համաձայնում են Պայմանագրի շրջանակում ցանկացած ծանուցում իրականացնել սույնում նշված էլեկտրոնային հասցեներով, ընդունում են նման եղանակով ծանուցման պատշաճ լինելը (անկախ նրանից, թե որևէ Կողմ որևէ ծանուցում կիրականացնի նաև այլ եղանակով) և երբևէ չեն վիճարկի դա: Միաժամանակ Կողմերը պարտավորվում են սույնում նշված հասցեների փոփոխության մասին անհապաղ հայտնել մյուս Կողմին: Համալսարանը՝ պաշտոնական կայք-էջում ազդարարման միջոցով, Ուսանողը՝ Համալսարանի էլեկտրոնային հասցեին ծանուցելու միջոցով: Ուսանողը ստանձնում է կրել հասցեի փոփոխության մասին չհայտնելու, ինչպես նաև նշված էլեկտրոնային հասցեի՝ որևէ պատճառով անհասանելի լինելու դեպքում տվյալ հասցեով ծանուցումները չստանալու բոլոր ռիսկերն ու բացասական հետևանքները:

37. Պայմանագիրը կազմված է 2 (երկու) հավասարազոր օրինակից, որոնցից մեկ օրինակը հանձնվում է Ուսանողին (ներկայացուցչին), իսկ մեկը՝ Համալսարանին:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ	ՈՒՍԱՆՈՂ
Ռեկտոր Վարդան Ուռուտյան	ազգանուն, անուն, հայրանուն
ստորագրություն և կնիք	ստորագրություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տերյան 74	անձը հաստատող փաստաթուղթ (անձնագրի թիվը, երբ և ում կողմից է տրված)
Արդշինքանկ ՓԲԸ Հ/Հ 2470100531030000	հաշվառման հասցե
Հայրիգնեսքանկ ՓԲԸ Հ/Հ 11500697984900	բնակության վայրի հասցե
ԱԿԲԱ բանկ ՓԲԸ Հ/Հ 220003320177000	էլեկտրոնային հասցե՝ info@anau.am

Լրացվում է այն դեպքում, երբ Ուսանողն անչափահաս է եւ գործում է մինչեւ Ուսանողի չափահաս դառնալը:

Ես՝ _____, սույնով լիազորում եմ իմ _____

_____ ին՝ Պայմանագրի շրջանակներում գործելու ի շահ ինձ՝

մասնավորապես ներկայացնելու և ստանալու ծանուցումներ, փաստաթղթեր, կատարելու վճարումներ:

Ես՝ _____, սույնով համաձայնում եմ Պայմանագրի

շրջանակներում հանդես գալու և գործելու իմ _____ ի
անունից և ի շահ նրա:

ազգանուն, անուն, հայրանուն

ստորագրություն

անձը հաստատող փաստաթուղթ
(թիվը, երբ և ում կողմից է տրված)

հաշվառման հասցե

բնակության վայրի հասցե
